ՎԱՐԴՈՒՀԻ ԶԱՔԱՐՅԱՆ

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅՈՒՄ

«Յուրաքանչյուր ոք ունի հեղինակած գիտական, գրական կամ գեղարվեստական աշխատանքի արդյունքն հանդիսացող իր բարոյական եւ նյութական շահերի պաշտպանության իրավունք»:
Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր /Հոդված 27/

Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական եւ տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու եւ հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք:
Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:
Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն /Հոդված 36/

Ստեղծագործողների իրավունքների եւ ստեղծագործության օգտագործման հետ կապված հարակից իրավունքների պաշտպանությունը պետության համար կարեւորագույն խնդիր է, որը պահանջում է հստակ եւ կանոնագրված քաղաքականության իրականացում եւ համապատասխան հայեցակարգի մշակում: Այն է՝ ձեւակերպված խնդիրների առաջադրում, լուծման ուղիների եւ մեխանիզմների որոշում, կոնկրետ գործառնություններով օժտված մարմինների առաջադրում[1]:

Հայաստանում հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների պաշտպանությունը երաշխավորում են ՀՀ «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների» մասին օրենքը (2006թ), Բեռնի համաձայնագիրը «Գրական եւ գեղարվեստական երկերի պահպանության» մասին (Բեռն, 1886թ.), «Հնչյունագրեր արտադրողների շահերը իրենց հնչյունագրերի անօրինական վերարտադրությունից պահպանելու» մասին համաձայնագիրը (1971թ.), Հռոմի միջազգային համաձայնագիրը «Կատարողների, հնչյունագրեր արտադրողների, հեռարձակող կազմակերպությունների պահպանության» մասին (Հռոմ, 1961թ.), Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության «Հեղինակային իրավունքի» (Ժնեւ, 1996թ.) եւ «Կատարումների եւ հնչյունագրերի» մասին պայմանագրերը (1996թ.)[2]:

---

[1] Տես «Մտավոր սեփականության պաշտպանության հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետություն», Արթուր Վարդերեսյան, «Հեղինակային իրավունք», Երեւան-2004, «Հայհեղինակ» ՀԿ, էջ 46:
[2] Տես ՀՀ Մտավոր սեփականության գործակալություն, www. aipa.am

Տեխնոլոգիական յուրաքանչյուր նոր նվաճում, ինչպես դաշնամուրի եւ երաժշտության նոտագրության հայտնագործությունը, հետագայում համր, այնուհետեւ ձայնային կինոն, հեռուստատեսային եւ կաբելային հեռուստատեսության հաղորդումները, ձայնագրությունները, ավելի ուշ՝ համակարգչային ծրագրերը, նորանոր հակասություններ էին ծնում։ Տեխնոլոգիաների զարգացումն ընթանում է չափազանց արագ, գերազանցում է օրենսդրության մշակման ավանդական գործընթացն ու տեղիք տալիս նոր հակասությունների օրենքներում եւ քաղաքականություն իրականացնողների մոտ։

Հայաստանում վերջին ժամանակաշրջանում լույս են տեսնում պարբերական նոր հրատարակություններ՝ բազմաթիվ թերթեր եւ ամսագրեր։ Նրանց մի մասը, շնորհիվ փորձառու լրագրողների, մեր երկրում եւ արտասահմանում հասել է որոշակի հաջողությունների։ Սրուս մասն էլ, չունենալով մտավոր ռեսուրսներ, շարունակում է լրագրողական նյութեր վերատպել այս ու այն թերթերից, որը ոչ միայն չի նպաստում նրանց հեղինակության բարձրացմանը, այլեւ առաջ է բերում մի շարք իրավախախտումներ։ Զարմանալի չէ, որ նման իրավիճակում, պրոֆեսիոնալ լրագրողների կարծիքով, ժուռնալիստիկայի բնագավառը Հայաստանում հայտնվել է օրենսդրական տեսադաշտից դուրս։ Նման կարծիքն այնքան էլ չի համապատասխանում իրականությանը եւ բխում է, առաջին հերթին, լրագրողների օրինական իրավունքների չիմացությունից։ Խոսքը հենց հեղինակային իրավունքի մասին է։

2006 թվականին ուժի մեջ մտավ «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը։ Համաձայն այս իրավական փաստաթղթի՝ «հեղինակային իրավունքը տարածվում է ստեղծագործական գործունեության արդյունք համարվող գիտության, գրականության եւ արվեստի ոլորտի ստեղծագործությունների վրա՝ անկախ ստեղծագործության նշանակությունից ու արժանիքներից, ինչպես նաեւ այն արտահայտելու իրավունքից» /հոդված 5/։

Ելնելով այս ձեւակերպումից՝ ցանկացած լրագրողական նյութ, լինի ակնարկ, ռեպորտաժ, էսսե, հարցազրույց, թե ֆելիետոն, որպես գրական ստեղծագործություն, ինչպես երաժշտությունը կամ նկարչի կտավը, համարվում է հեղինակային իրավունքի օբյեկտ։ Ուստի լրագրողը նույնպես ունի իր ստեղծագործությունն օգտագործելու բացառիկ իրավունք։ Նա իրավունք ունի արգելել իր գրական նյութերի օգտագործումն ուրիշների կողմից, դրանք այլ լեզուներով թարգմանելը եւ այլն։ Հեղինակային իրավունքը խախտելու դեպքում լրագրողը կարող է նյութական եւ բարոյական վնասների հատուցում պահանջել։

Սակայն, լրագրողի ստեղծագործությունն ինչ-որ չափով տարբերվում է նկարչի, գրողի ստեղծագործական աշխատանքներից։ Եթե երաժշտությունը, նկարը, վեպը առանձին անձի գործունեության արդյունք են, ապա ակնարկ-

ները, ռեպորտաժներն ու լրատվությունը ստեղծվում է անմիջապես ընթերցողի համար եւ մատչելի են դառնում թերթում կամ ամսագրում հրապարակելուց պահից: Տվյալ նյութի հրապարակման թույլտվությունը տալիս է երրորդ անձը՝ պարբերական հրատարակության խմբագիրը: Լրագրողի գործունեության այս առանձնահատկությունը սահմանում է այն չափանիշները, որոնցով պետք է դեկավարվի լրագրողն իր հեղինակային իրավունքների պաշտպանության դեպքում:

Շատ լրագրողներ որպես հաստիքային աշխատողներ ծառայողական հարաբերությունների մեջ են գտնվում պարբերական հրատարակությունների դեկավարների հետ: Համաձայն «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի՝ «գործատուի ծառայողական հանձնարարությունների կամ ծառայողական պարտականությունների կատարման կարգով ստեղծված ստեղծագործության նկատմամբ անձնական ոչ գույքային իրավունքները պատկանում են ստեղծագործության հեղինակին, իսկ գործատուի ծառայողական հանձնարարությունների կամ ծառայողական պարտականությունների կատարման կարգով աշխատողի կողմից ստեղծագործության ստեղծման դեպքում գործատուն համարվում է այդ ստեղծագործության նկատմամբ հեղինակային բացառիկ իրավունքի իրավատերը»: Դա նշանակում է, որ հաստիքային լրագրողն իր գեղարվեստական ակնարկը, ռեպորտաժը եւ այլն տրամադրում է խմբագրությանը, վերջինս էլ իր հերթին ծառայողական կարգով վճարում է այդ լրագրողին կատարված աշխատանքի համար: Այս դեպքում լրագրողական նյութի հեղինակային իրավունքը պատկանում է տվյալ խմբագրությանը: Խմբագրությունը դառնում է լրագրողի ստեղծագործության իրավատերը, ընդ որում, կարող է տնօրինել այն իր հայեցողությամբ՝ պարտադիր նշելով նյութի հեղինակի անունը: Իսկ եթե լրագրողը ծառայողական հարաբերությունների մեջ չէ գործատուի հետ եւ շարունակում է մնալ անկախ ստեղծագործող, ապա ակնարկի, ռեպորտաժի եւ այլնի հրապարակման դեպքում նրա հեղինակային իրավունքը պետք է կարգավորվի գրավոր պայմանագրի օգնությամբ: Դառնալով իրավատեր՝ լրագրողը կարող է իր ստեղծած նյութն օգտագործել իր հայեցողությամբ, այսինքն՝ հանձնել այն մի քանի պարբերաբար հրատարակությունների՝ կնքելով միաժամանակ առանձին պայմանագիր յուրաքանչյուր խմբագրի հետ, թույլ տալ տպագրելու մեկ կամ ավելի անգամ, եթե պետք է՝ կատարել կրճատումներ կամ ավելացումներ բնագրում եւ այլն: Ընդ որում, լրագրողական նյութի օգտագործման իրավունքները եւ պարտականությունները պետք է կարգավորվեն պայմանագրով[3]:

---

[3] Տե՛ս «Ժուռնալիստիկան եւ հեղինակային իրավունքը», Մագդալինա Զատիկյան, «Հեղինակային իրավունք», Երեւան-2004, «Հայհեղինակ» ՀԿ, էջ 19:

Ժուռնալիստիկայի ասպարեզում առկա միջազգային փորձը ցույց է տալիս, որ նման պայմանագիրն օգնում է խուսափելու լրագրողի հեղինակային իրավունքի խախտումներից:

Պետք է նշել, որ համաձայն 1996թ. «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանի տարածքում նախատեսվում էր ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր պայմանագրի կնքում: Սակայն մեր երկրում բանավոր պայմանագրի կետերի չիրագործման դեպքում հնարավոր չէր անգամ դատական կարգով որոշել, թե ով է հեղինակային իրավունքի իրական խախտողը: Նման իրավիճակը ստեղծեց սույն օրենքից հանել վերը նշված կետը: Նոր օրենքով պայմանագիրն ուժի մեջ է մտնում միայն գրավոր կնքման դեպքում:

Երբեմն մամուլում կարելի է հանդիպել երկու եւ ավելի անձանց կողմից ստորագրված նյութերի: Այս դեպքում մենք գործ ունենք հանահեղինակության հետ, որի համաձայն՝ «ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը հեղինակներին է պատկանում համատեղ՝ անկախ ստեղծագործության կառուցվածքից» /հոդված 10/: Համահեղինակների փոխհարաբերությունները սահմանվում են նրանց միջեւ համաձայնությամբ: Եթե նման պայմանագիր չի կնքվում հեղինակների միջեւ, ապա, ըստ ՀՀ օրենքի՝ «հեղինակային իրավունքը բոլոր հեղինակներին պատկանում է համատեղ, իսկ ստացվող վարձատրությունը նրանց միջեւ բաշխվում է հավասար»: Եթե համատեղ ստեղծագործության հեղինակներից մեկն օգտվում է հեղինակային իրավունքից օրենքին համապատասխան, ապա մյուսն «իրավունք չունի առանց հիմնավորված պատճառաբանումների արգելել ստեղծագործության օգտագործումը»: Իսկ եթե համատեղ ստեղծագործության առանձին մասերն ունեն ինքնուրույն նշանակություն, ապա «համահեղինակներից յուրաքանչյուրն իրավունք ունի ստեղծագործության իր ստեղծած ինքնուրույն նշանակություն ունեցող մասն օգտագործել իր հայեցողությամբ»:

Հեղինակային իրավունքի ՀՀ օրենքում կա առանձին հոդված «հարցազրույց» լրագրողական ժանրի վերաբերյալ: Քանի որ հարցազրույցին մասնակցում է երկու անձ թղթակիցը եւ հարցերին պատասխանողը (ինչպես համահեղինակության դեպքում), ապա ՀՀ օրենքը նախատեսում է նույնատիպ իրավունքներ երկուսի համար. «Հարցազրույցի ձայնագրության կամ տեսագրության նկատմամբ հեղինակային իրավունքը պատկանում է ինչպես հարցազրույց տվող անձին, այնպես էլ հարցազրույց անցկացնող եւ ձայնագրող կամ տեսագրող անձին՝ որպես համահեղինակների, եթե նրանց միջեւ չկա այլ պայմանավորվածություն» /24-րդ հոդված/:

Յուրաքանչյուր լրագրող իրավունք ունի ճանաչվելու իր ստեղծագործության հեղինակ եւ հրապարակվելու այն անվան տակ, կեղծանունով կամ անանուն: Ոչ մի խնբագիր իրավասու չէ հրապարակել լրագրողական նյութը հեղինակի իրական անվան տակ, եթե լրագրողն իր ակնարկը կամ ռեպորտաժը ստորագրել է ստեղծագործական կեղծանունով: Չի կարելի է նաեւ փոխել կեղծանունը[4]:

ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը նախատեսում է նաեւ հեղինակի այլ բարոյական իրավունքների պաշտպանությունը, մասնավորապես ստեղծագործության անձեռնամխելիության իրավունքը: Լրագրողը, իր ստեղծագործական նյութի հեղինակը լինելով, իրավասու է արգելելու ուղղումներ եւ լրացումներ մտցնել ակնարկի, ռեպորտաժի եւ այլնի մեջ:

Ցավոք, մեր լրագրողներն ամեն քայլափոխին բախվում են հեղինակային իրավունքի նմանատիպ խախտումների հետ: Նյութի կրճատ կամ էլ աղավաղված վերատպումը ՁԼՄ-ի այլ սուբյեկտների կողմից, խմբագրային ուղղումները, որոնք կատարվում են առանց հեղինակին տեղեկացնելու եւ հեղինակի բարոյական իրավունքների այլ խախտումները լրագրողների համար դարձել են սովորական երեւույթներ: Ամեն դեպքում, լրագրողի ստեղծագործության մեջ ցանկացած միջամտություն արգելվում է գործող օրենսդրությամբ:

Հայկական ՁԼՄ-ներին բնորոշ է լրագրողի հեղինակային մի խախտում եւս՝ նյութի վերատպումն ուրիշ թերթում կամ ամսագրում: Նույնիսկ եթե այն կատարվել է առանց տեքստային փոփոխությունների, նման խախտումը կարելի է բնութագրել որպես ծովահենություն ժուռնալիստիկայի բնագավառում: Այս դեպքում լրագրողը չի ստանում հոնորար իր հոդվածի համար: Այսօր Հայաստանում գրեթե հնարավոր չէ գտնել մի թերթ, որի էջերում չլինեն օտարերկյա, հիմնականում ռուսական մամուլից վերցրած լրագրողական նյութեր: Արտասահմանյան նյութերի նման վերատպումը նույպես չի կատարվում օրենքի սահմաններում:

Իր հեղինակային իրավունքները պաշտպանելիս լրագրողը կամ մեկ այլ իրավատեր կարող է խախտողից պահանջել իր իրավունքների ճանաչումը, նմանակված օրինակը, դրա բռնագրավումը կամ ոչնչացումը, վնասի փոխհատուցում: Այսպիսով, լրագրողը որպես ստեղծագործության հեղինակ կամ իրավատեր օրինական հնարավորություն ունի պատժելու իր իրավունքները ոտնահարողին դատական կարգով ընդհուպ մինչեւ վեջինիս քրեական պատասխանատվության ենթարկելը:

---

[4] Տե՛ս «Ժուռնալիստիկան եւ հեղինակային իրավունքը», Մագդալինա Զատիկյան, «Հեղինակային իրավունք», Երեւան-2004, «Հայհեղինակ» ՀԿ, էջ 22:

Լրագրողական գործունեության բոլոր տեսակներից, ըստ օրենքի, հեղինակային իրավունքի օբյեկտ չի համարվում միայն տեղեկատվությունը կամ, ինչպես նշված է 6-րդ հոդվածում, «օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների մասին մամուլի տեղեկատվություն ներկայացնող հաղորդումները»: Նորությունների ժանրը համարվում է լրագրողի կողմից չոր հաղորդում այս կամ այն իրադարձության, դեպքի մասին, առանց ստեղծագործական մոտեցման: Ներկայիս օրենսդրությամբ թույլատրվում է նաեւ «հրապարակավ արտասանված քաղաքական ելույթների, զեկույցների, հայտարարությունների եւ այլ նմանօրինակ ստեղծագործությունների վերարտադրումը մամուլում եւ հեռարձակումը տեղեկատվության նպատակն արդարացնող ծավալով», նաեւ «ընթացիկ հարցերին վերաբերող օրինական ճանապարհով մամուլում հրապարակված հոդվածների կամ նմանօրինակ բնույթի հեռարձակված ստեղծագործությունների վերարտադրումը մամուլում եւ հեռարձակումը, եթե հեղինակը նման օգտագործումը նախապես չի արգելել» /հոդված 13/:

Համակարգչային տեխնոլոգիաների արմատավորումը մեր կյանքում առաջ բերեց ԶԼՄ-ի նոր տեսակ՝ էլեկտրոնային լրատվամիջոցներ: Համացանցի էջերում տեղադրված նյութերին հետեւելը բավականին դժվար է այսօր իրականացնել, քանի որ ոչ բոլորն ունեն համակարգիչ եւ ոչ բոլորն են տիրապետում համակարգչային ծրագրերին: Սա բազմաթիվ ինտերնետային խմբագրերին հնարավորություն է տալիս զբաղվել լրագրողական ծովահենությամբ՝ իրենց էլեկտրոնային պարբերականներում տեղադրելով ցանկացած լեզվով եւ ժանրով գրված նյութեր: Սա, անշուշտ, նույնպես հեղինակային իրավունքի խախտում է:

Այն ժամանակից ինչ գոյություն ունի համակարգիչը, համակարգչային ծրագրերի ծովահենությունն եղել է կարեւորագույն խնդիրներից մեկը: Ծրագրեր արտադրողները փորձում են տեխնիկական միջոցներով պաշտպանել անօրինական պատճենականումներն ու կրկնօրինակումները, բայց չնայած բոլոր ջանքերին՝ անձնական համակարգիչների քանակի աճման հետ զուգահեռ մեծանում է նաեւ համակարգչային ծրագրերի ծովահենությունը: Համաշխարհային Առեւտրի Կոմիտեն գնահատել է, որ մտավոր սեփականության գողությունը ԱՄՆ-ում տարեկան կազմում է ավելի քան 40 միլիոն դոլար: Մեր իրականության մեջ պտտվող թվերն էականորեն այնքան էլ չեն տարբերվում վերը նշվածից: Հայաստանում ծովահենության չափը հասնում է 90 տոկոսի[5]: Նույն պատկերը նաեւ հայկական Ինտերնետում է: Սակայն խախտումները

---

[5] ՀՀ Մտավոր սեփականության գործակալության պետ Անդրանիկ Խաչիկյան, հարցազրույց 2006:

դառնում են ավելի անվերահսկելի տեխնոլոգիական զարգացումների հետ զուգահեռ:

Ցանկացած կայք ներկայացնում է կայքի բովանդակության օգտագործման իր պայմանները: Ընդհանրապես ամբողջ աշխարհում ընդունված են եւ գործում են ինտրնետային բովանդակությունից օգտվելու որոշակի էթիկական կանոններ: Սովորաբար կայքի ներքեւի մասում տեղադրվում է հեղինակային իրավունքի պաշտպանության նշանը, ինչը նշանակում է, որ բովանդակության ցանկացած օգտագործում պետք է ինչ որ կերպ համաձայնեցվի կայքի տնօրինողների հետ կամ գոնե նշվի բովանդակության հեղինակը եւ սկզբնաղբյուրը: Երբեմն պահանջում են հատուկ պայմանավորվածություն կայքի տնօրինողների հետ:

Հեղինակային իրավունքի նկատմամբ հարգանքը պետք է ձեւավորվի ոչ թե վախից, որ խախտման դեպքում անմիջապես կհետեւի պատիժը, այլ՝ պատկերացումների փոփոխություններից: Շատ դեպքերում հայկական միջավայրում, մանավանդ, եթե ստեղծագործությունն Ինտերնետում է, գործում է այն սկզբունքը, որ այն ոչ ոքին է, ուստի կարելի է ազատորեն գործածել, անվանափոխել, դրա հաշվին գումար աշխատել: Դա, իհարկե, վատագույն դեպքում: Ընդհանուր առմամբ ձեւավորված չէ այն մտայնությունը, որ դա նույնպես աշխատանք է, որը պետք է վարձատրվի:

Օրինակ www.britishembassy.gov.uk Հայաստանում բրիտանական դեսպանության կայքում հստակորեն կետ առ կետ սահմանված են այն բոլոր պայմանները, որոնք պարտադիր են կայքի յուրաքանչյուր օգտագործողի համար: Այնտեղ գրված է, որ Բրիտանական դեսպանատան ինքնությունը սահմանող անվանումները, պատկերները եւ խորհրդանիշները Նորին Մեծության Կառավարության սեփականությունն են: Դրանց պատճենահանումը չի թույլատրվում, եթե չկա նախնական համաձայնություն: Կայքի հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերը կարող են անվճար վերարտադրվել ցանկացած ձեւով եւ միջոցով, եթե այն վերարտադրվում է ճշգրտորեն եւ չի օգտագործվում մոլորեցնող ենթատեքստում: Վերարտադրության թույլտվությունը չի տարածվում էջի ցանկացած նյութի վրա, որը երրորդ կողմի սեփականությունն է: Այդպիսի նյութերի վերարտադրման թույլտվությունը պետք է տրվի տվյալ սեփականտիրոջ կողմից:

Կամ օրինակ Հայաստանում Եվրոպայի Խորհրդի գրասենյակի կայքում՝ www.coe.am գրված է, որ Եվրոպայի խորհրդի ինտերնետային էջերի պարունակած տեղեկատվության վերարտադրումը թույլատրելի է աղբյուրը մատնանշելու պարագայում: Նշված կայքի էջերում պարունակվող տեղեկատվությունը ոչ անձնական, հատկապես առեւտրային նպատակներով օգտագործելու ցանկու-

թյան դեպքում խնդրվում է նախապես ստանալ գրասենյակի գրավոր թույլտվությունը: Այսինքն կայքերն Ինտերնետ օգտագործողին հստակ տեղեկացնում են մտավոր սեփականության եւ հեղինակային իրավունքի հարցերի վերաբերյալ իր որդեգրած դիրքորոշման մասին եւ գործում են շատ կոնկրետ պայմաններին համաձայն, մշակված եւ հղկված գործելաոճով եւ քաղաքականությամբ:

Ընդհանրապես եվրոպական եւ ամերիկյան ծագում ունեցող կայքերում հեղինակային իրավունքի հարցերում նկատվում է հստակություն, գործելաոճի սոլիդարություն, որը մշակվել եւ հղկվել է ոչ թե ինչ-որ կառույցի, օրենքի թելադրությամբ, այլ՝ գլխավորապես իրենց ապրելաոճում եւ մշակույթում: Նրանց համար երկրորդային եւ երրորդային խնդիր չէ տեղեկացնել, թե ինչ քաղաքականություն է որդեգրել տվյալ կայքը հեղինակային իրավունքի հարցում: Եվ դա բոլորովին պարտադրված չէ ինչ-որ մեկի կողմից, դա ինքնին հասկանալի եւ ընդունելի երեւույթ է: Այդ մեխանիզմը զարգացել եւ գործում է հասարակության ներսում եւ շարունակում է ծեւավորվել նաեւ Ինտերնետում:

Ի վերջո, խնդրի կարգավորման համար նախատեսված ազգային օրենսդրության ստեղծման գործընթացը կարող է ավելի քիչ ժամանակ պահանջել, բայց կրել բազմաթիվ դժվարություններ: Մյուս կողմից Ինտերնետի զարգացման տեմպը, որն առաջ է մղվում առանձին անհատների կողմից եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նվաճումներով, նոր դժվարություններ են առաջացնում: Թվանշային հեղափոխությունն անվերջ հնարավորություններ է ընձեռնում էժան, արագ եւ բնօրինակին համարժեք որակով վերարտադրության համար: Այսպիսով, եթե անգամ օրենքը սահմանում է, թե ինչը պետք է պաշտպանվի, շատ հաճախ Հայաստանում գործնականում այդ ծեւակերպումները մնում են թղթի վրա: Իրականությունը բոլորովին այլ տեսք ունի:

Հեղինակային իրավունքի պաշտպանությունն արեւմտյան եւ ասիական մշակույթների տեսանկյունից նույնպես միանգամայն այլ պատկեր ունի: Ամերիկյան հետազոտողների մի խումբ[6] ԱՄՆ-ի եւ Ասիայի 370 ուսանողների շրջանում անցկացրած հարցումների հիման վրա եզրակացրել է, որ ասիական երկրների ուսանողները շատ ավելի պատրաստակամությամբ են ուրիշներին տալիս իրենց համակարգչային ծրագրերն օգտագործելու կամ պատճենահանելու համար, քան՝ ԱՄՆ-ի ուսանողները: Եվ թեպետ ասիացիներն ընդունում են, որ պատճենահանումներն անօրինական են, բայց դա անբարոյական չեն համարում: Ամերկացիներն, ընդհակառակը, այդ երեւույթն էթիկապես անընդունելի են համարում:

---

[6] Computers and Ethics in the Cyberage. The Morality of software piracy a cross –cultural analysis. W. R. Swinyard, N. Rinne and A. Kengkau.